ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԶՈՎՐԵՑՈՒ ԵԿԵՂԵՑՈՒ ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻՆ

Հունիս 19-28, 2013

Ինդիանապոլիս, Ինդիանա, ԱՄՆ

Աստվածաշնչի Ուսումնասիրության Հանձնաժողով

ՀԱՆՁՆԱԿՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Հարի Բեննետ, Ստեֆան Դիլլման, Բրեդլի Էստեպ, Թոմաս Կինգ (նախագահ), Ջոզեֆ Նայտ, Մելվին ՄակԿալոխ, Ջեսսի Ս. Միդդենդորֆ, Թոմ Նոբլ, Քրիստիան Սարմիենտո, Արթուր Շնայդեր, Ալեքսանդր Վարգուզե (քարտուղար), Դավիդ Վիլսոն և Ստեն Ինգերսոլի ու Շիրլի Մարվինի աջակցությամբ:

ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհուրդը հանձնարարեց Աստվածաշնչի Ուսումնասիրության Հանձնաժողովին (ԱՈՒՀ), խորհրդածել 2009 թվականի Գլխավոր Ասամբլեայի կողմից ընդունված երեք բանաձևերի մասին, և գործողության համար կազմել համապատասխան առաջարկություններ մինչև 2013 թվականի Գլխավոր Ասամբլեայի սկիզբը: Ներքևում հետևող շարադրված հաշվետվությունը սկսվում է Հավատքի Դրույթների Հոդված IV (Սուրբ Գիրք) վերաբերյալ առաջադրված, JUD-805 բանաձևի Հանձնաժողովի պատասխանով: Այնուհետև հետևում են Հանձնաժողովի պատասխանները JUD-802 և JUD-816 բանաձևերին, որոնք երկուսն էլ վերաբերվում են Հավատքի Դրույթներից Հոդված VI (Քավության): Հաշվետվությունը ավարտվում է Աստվածաշնչի Ուսումնասիրության Հանձնաժողովի բանաձևով, որը վերաբերվում է Հավատքի Դրույթների հետ կապված ապագա բանաձևերի առաջարկությունների հետ:

I. 2009 ԹՎԱԿԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱԴՐԱԾ JUD-805 ՀԱՎԱՏՔԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻՑ, ՀՈԴՎԱԾ IV (ՍՈՒՐԲ ԳԻՐՔ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ԲԱՆԱՁԵՎԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

JUD-805 բանաձևը, Հավատքի Դրույթի Սուրբ Գիրք Հոդված IV վերաբերյալ: Վերացնել "առանց սխալի բացելով մեզ համար Աստծո կամքը այն ամենի վերաբերյալ, ինչ անհրաժեշտ է մեր փրկության համար" արտահայտությունը և փոխել "ամեն ինչում անսխալական է և ամեն ինչում գլխավոր հեղինակություն է, ինչ որ սովորեցնում է Աստվածաշունչը" արտահայտությունով:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Մերժել JUD-805 բանաձևը, որը ձգտում է բառափոխել Հավատքի Դրույթի Սուրբ Գիրք Հոդված IV: Տվյալ հանձնաժողովը առաջարկում է թողնել այդ Հավատքի Դրույթը այնպես, ինչպես այն ներկայումս ներկայացված է:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

2009 թվականի Գլխավոր Ասամբլեայի կողմից առաջարկվել է Նազովրեցու Եկեղեցու Հավատքի Դրույթի Հոդված IV փոփոխությունը, Սուրբ Գրքի ամբողջական անսխալականությունը հաստատելու համար, հստակ հետևում է այն ցանկությունից, որպեսզի մեր կյանքում և մեր աստվածաբանության մեջ, Սուրբ Գրքին հատկացվի իր օրինական տեղը: Քանի որ, Հանձնաժողովին խնդրվել է գնահատել այդ առաջարկությունը, ապա նախ և առաջ Հանձնաժողովը կցանկանար իր երախտագիտությունն արտահայտել այդ ցանկության և հոգատարության համար, ինչպես նաև հաստատել համերաշխությունը բոլոր նրանց հետ, ովքեր մեծ կարծիք ունեն եկեղեցու և յուրաքանչյուր քրիստոնյաի կյանքում Աստվածաշնչի տեղի մասին: Ջոն Վեսլին իրեն հռչակում էր *homo unius libri* ՝ մեկ գրքի մարդ, և մեթոդիստներին նկարագրում էր որպես՝ "Սուրբ Գրքի քրիստոնյաներ", ովքեր լեցուն են քարոզելու պարզ աստվածաշնչյան քրիստոնեություն քարոզելու վճռականությամբ:[1] Հետևաբար մենք միանում ենք բոլոր նրանց, ով պաշտպանում և աջակցում է Աստվածաշնչի հեղինակությունը քրիստոնեական հավատքի և պրակտիկայի, վարդապետության ու էթիկայի համար: Հավատքի Դրույթ IV, ինչպես նաև մնացած բոլոր դրույթները հանդիսանում են հավատքի դրույթներ, և հետևաբար այն մեր հավատքի մի մասն է: Այդ լույսի ներքո և այդ հոգով մենք առաջարկում ենք հետևյալ հաշվետվությունը:

1. ՀԱՎԱՏՔԻ ԴՐՈՒՅԹ IV ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Մենք կցանկանայինք ուշադրություն դարձնել տվյալ պահին գոյություն ունեցող Հավատքի Դրույթ IV ուժեղ կողմերին, որը հռչակում է Սուրբ գրքի նկատմամբ ունեցած մեր կողմնակցությունը:

(ա) Ամբողջությամբ աստվածային ոգեշնչում

Նախ և առաջ, տվյալ հավատքի դրույթը հաստատում է Սուրբ Գրքի աստվածային ոգեշնչումը, նրա "աստվածային" և "ամբողջական" ներշնչանքը: Դա նշանակում է, որ սուրբ Գիրքը աստվածաշունչ է և նա հատկապես աստվածաշունչ է, այսինքն՝ այն պարզապես "ներշնչանքով" գրված ստեղծագործություն չէ, այլ այն ոգեշնչված է Աստծո կողմից: Ասել, որ Սուրբ Գիրքը ամբողջությամբ աստվածաշունչ է, նշանակում է ասել, որ մենք չենք կարող համատեքստից պոկել տեքստեր և կատարել կամայական մեջբերումներ, որպես "Աստծո Խոսք": Մենք պետք է Սուրբ Գրային աստվածաբանությունը հասկանանք որպես մեկ ամբողջականություն: Մենք հավատում ենք, որ Աստվածային ներշնչումը չեղյալ է համարում մարդկային հեղինակությունը: Սուրբ Գրքի յուրաքանչյուր գիրք, ունի վառ ընդգծված ոճ,

[1] Preface to Sermons, *Works* [BE], Vol. 1, page 105; and 'Short History of Methodism,' *Works* [BE], Vol. 9, page 369.

բառապաշար և արտահայտություններ, որոնք արտացոլում են բացարձակապես տարբեր հեղինակների ոճերը և նրանց համատեքստերը, ինչպես, օրինակ, Երեմիան և Եզեկիելը, Ղուկասը և Պողոսը, կամ թե անհայտ հեղինակները: Մենք չենք հավատում ոգեշնչման մեխանիկական գաղափարին, որի ժամանակ նրանց բանականությունը արգելափակվել է և նրանք պարզապես դարձել են խամաճիկներ (մարիոնետներ): Ավելի շուտ, նրանց մտավոր ունակությունները ավելի են ամրապնդվել և նրանց ազատ կամքը առաջնորդվել է Աստծո նուրբ ու զգայուն Հոգով: Արդյո՞ք նրանք նյութեր են հավաքել, կամ խմբագրել են այն, ինչ ավելի վաղ արդեն գրված է եղել, կամ գրառել են այն ինչը անմիջականորեն Սուրբ Հոգին նրանց ներշնչել է գրել, այդ ամենի հետևանքը եղել է Աստծո նպատակներին համապատասխան փաստաթղթերի հավաքածու: Բացահայտել Աստծո կամքը և ճանապարհը, Աստծո գործերը և հայտնել բարձրագույն հայտնությունը Իր մարմնավորված Որդու միջոցով: Մենք համաձայն ենք Քեյփ Թաունում անցկացված Երրորդ Լոզանյան համաժողովի հաստատման հետ, երբ նրանք խոսում են իրենց հավատքի հանգանակության մասին.

> Մենք ամբողջ Սուրբ Գիրքը ստացել ենք որպես Աստծո Խոսք, ոգեշնչված Աստծո Հոգով, որը խոսվել և գրվել է մարդկային հեղինակների կողմից: Մենք հնազանդեցնում ենք մեզ նրան, որպես միակ և բարձրագույն հեղինակության, որը ղեկավարում է մեր հավատքը և մեր վարքագիծը: Մենք վկայում ենք իր նպատակին հասնելու համար Աստծո Խոսքի զորության մասին, որն է մեր փրկությունը: Մենք հաստատում ենք, որ ամբողջ Սուրբ Գիրքը հանդիսանում է վերջնականապես գրված Աստծո Խոսք և նրան չեն գերազանցի ցանկացած հետագա հայտնությունները, բայց մենք նաև ուրախանում ենք, որ Սուրբ Հոգին լուսավորում է Աստծո ժողովրդի միտքը այնպես, որ Սուրբ Գիրքը յուրաքանչյուր մշակույթներում, տարբեր միջոցներով շարունակում է խոսել Աստծո ճշմարտությունը: [2]

Մենք վճռականորեն ընդունում ենք Քեյփ Թաունում արված առաջարկը այն մասին, որ մենք սիրում ենք Աստծո Խոսքը, Նրա խաղաղությունը, սիրում ենք Ավետարանը, սիրում ենք Աստծո ժողովուրդը և սիրում ենք Աստծո առաքելությունը:

(բ) Անսխալականորեն բացահայտելով Աստծո կամքը

Երկրորդ, Հավատքի Դրույթ IV պարզ հաստատում է, որ Սուրբ Գիրքը *անսխալականորեն* բացահայտում է Աստծո կամքը: Դա նշանակում է, այն, որ սուրբ Գիրքը խոսում է Աստծո և Նրա փրկարար գործողությունների և նպատակների մասին, այն չի կարող փոխարինվել պարզ մարդկային փիլիսոփայությունով, մետաֆիզիկայով կամ էթիկայով: Մարդկային բանականությունը և մշակույթը անկում է ապրած, հետևաբար հակված են կասկածելու, երբ գործը հասնում է

[2] *The Cape Town Commitment: A Confession of Faith and a Call to Action* (The Lausanne Movement, 2011).

Աստծո կամքի ճանաչողությանը, բայց մեզանից յուրաքանչյուրը կարող է վստահել Սուրբ Գրքի միջոցով տրված Աստծո Խոսքին, որպես՝ "ճրագ իմ ոտներին և լույս իմ ճանապարհին" (Սաղմոս 119:105): Մարդկային բանականությունը և փորձը կարող է մեզ ուղղորդել շատ բաների մեջ, բայց երբ գործը հասնում է այն բաներին, որոնք կապված են Աստծո հետ (որոնք ձևավորում են մեր ամբողջ կյանքը), ապա նրանք պետք է հնազանդվեն նրան, թե ինչ է նա այդ ամենը բացահայտում ներշնչված Սուրբ Գրքում: Հավատքը առ այն, որ անվանվում է Սուրբ Գրքի «անսխալականություն», որը "անսխալականորեն բացահայտում է Աստծո կամքը այն ամենի համար, որը անհրաժեշտ է փրկության համար", ի տարբերություն բացարձակ "անսխալականության" յուրաքանչյուր գոյություն ունեցող դետալի: Դա ենթադրում է, որ չնայած Սուրբ Գիրքը ուղղորդում է մեզ, երբ մենք հնազանդվում ենք Աստծո ձայնին, որը մեզ հետ խոսում է Սուրբ Գրքի միջոցով, ապա չեն ընդունվում Աստծո ճշմարտության մասին անձնական հայտնությունների մասին հայտարարություն_ ները, որոնք Սուրբ Գրքի վրա ավելացնում են ինչ- որ բան:

Սակայն դա չի ենթադրում, որ մենք անսխալական ենք Սուրբ Գրքի մեր մեկնությունների մեջ: Որոշ քրիստոնյաներ մտածում են, որ նրանք պարզապես հաստատում են այն ինչ խոսում է Սուրբ Գիրքը, սակայն այդպիսի մտածելակերպը միամտություն է: Մենք ցանկանում ենք դա, թե՝ ոչ, բայց յուրաքանչյուր քրիստոնյա մասնակցում է Սուրբ Գրքի *մեկնաբանության* գործում: Հետևաբար, մենք պետք է նախադասության մեջ մեկնաբանենք յուրաքանչյուր բառը, իսկ նախադասությունը իր պարագրաֆի մեջ և յուրաքանչյուր պարագրաֆը, ամբողջ գրքի գաղափարի հետ, իսկ Սուրբ Գրքի յուրաքանչյուր գիրքը ամբողջ Գրվածքի հետ, որպես մեկ ամբողջականություն: Մենք մեկնաբանում ենք Նոր Կտակարանը, ելնելով Հին Ուխտի գիտելիքների համատեքստից, իսկ Հին Ուխտը Նոր Կտակարանի լույսի ներքո և հատկապես այն լույսի ներքո, թե ինչպե՞ս է քայլ առ քայլ հայտնությունը մեզ տանում դեպի Աստծո վերջնական հայտնություն Հիսուս Քրիստոսում: Երբ մենք Սուրբ Գիրքը մեկնաբանում ենք ամբողջականությամբ, մենք առաջնորդվում ենք եկեղեցու հին հավատքի հանգանակություններով: Այդ ամենը, մեզ ոչ միայն կոչ է անում մանրազնին գիտական վերլուծության, այլ նաև նրան, որ մենք կախվածություն ունենանք Սուրբ Հոգուց: Մենք բոլոր քարոզիչներից և ուսուցիչներից ակնկալում ենք, որ նրանք կառաջնորդվեն Սուրբ Գրքի այն մեկնաբանությանը, որ մեզ տրվել է հավատքի հին հանգանակություններով և Հավատքի դրույթներով, բայց մյուս հարցերով մենք հավատարիմ ենք մնում մեկնաբանության ազատությանը, միայն եկեղեցուն հավատարմության հոգով: Երբ մենք մեկնաբանում ենք Սուրբ Գիրքը եկեղեցու և համայնքի ներսում միասին, ապա մենք փնտրում ենք այն, որ Սուրբ Հոգին մեզ ապագայում կառաջնորդի մեզ համապատասխան "Աստծո կամքով, բարին, հաճելի և կատարյալը " (Հռովմ. 12:2):

(գ) Այն ամենը ինչ անհրաժեշտ է մեր փրկության համար

Երրորդ՝ դա մեզ հանգեցնում է նրան, որ Հավատքի Դրույթներ IV հստակ պարզաբանում է Սուրբ Գրքի նպատակը. Բացահայտելու Աստծո կամքը "...ժամանակին, այն ամենը ինչ անհրաժեշտ է մեր փրկության համար...": Ջոն Վեսլին շատ պարզ հասկացնել էր տալիս, որ "մեկ գրքի" մարդ հանդիսանալու նպատակն էր գտնել "երկնքի ճանապարհը": Սուրբ Գրքի հետ չպետք է վարվել որպես ամսագրի, կամ կախարդական գրքի, կամ էլ պատմության դասագրքի: Նրա ճշմարտությունը արտահայտված է հին աշխարհի մտային ձևերով, նրանց մշակույթով, համատեքստով, աշխարհագրությունով, կոսմոլոգիայով և լեզվով: Բայց մյուս կողմից, Իսրայելի պատմության մեջ Աստծո գործերը և հատկապես Տեր Հիսուս Քրիստոսի կյանքը, մահը և հարությունը "անհրաժեշտ էր մեր փրկության համար": Հետևաբար, մեր հավատքի մի մասնիկն է հանդիսանում հավատքը առ այն, որ Սուրբ Գիրքը, դա Աստծո կողմից տրված պատմություն է Աստծո գործերի մասին, պատմության տարածա-ժամանակային հատվածում, և այսպիսով, Սուրբ Գիրքը հանդիսանում է Աստծո հայտնության անբաժանելի մասը պատմության և հատկապես Տեր Հիսուս Քրիստոսի մեջ: Եվ չնայած գիտությունը զարգանում է ուսումնասիրելով "բնության գիրքը", այլ ոչ թե աստվածաշնչյան ուսմունքը, համենայնդեպս ժամանակակից գիտությունը հայտնվեց քրիստոնեական մշակույթի մեջ և բխում էր քրիստոնեական համոզմունքներից, և ի վերջո մենք համարում ենք, որ այն ամենը, ինչ մենք իմանում ենք գիտության շնորհիվ ավելի քան համատեղելի է այն ամենի հետ, ինչը մեզ բացահայտվել է Սուրբ Գրքի միջոցով:

Հավատքը դեպի Ավետարանի փրկության խոսքը, նաև ենթադրում է հնազանդություն Աստծո օրենքին: Ապրելով և դիտավորյալ խախտելով Աստծո օրենքը, որը ինչպես մեկնաբանվել է Հիսուսի և Առաքյալների կողմից, դա անօրենություն է և հավատքի հերքում: Քրիստոնեական էթիկան ձևավորվում է ելնելով նրանից, թե Եկեղեցին առաջնորդվելով Սուրբ Հոգով և ղեկավարվելով եկեղեցու իմաստությամբ, որը նա ունեցել է հարյուրամյակների ընթացքում, ինչպես է մեկնաբանում Սուրբ Գիրքը:

(դ) Այն ինչ չկա Սուրբ Գրքի մեջ, չ'պետք է լինի Եկեղեցու ուսմունք

Չորրորդ, Հավատքի Դրույթներ IV վերջին նախադասությունը իր իմաստով երևի ամենահզորն է: Նրա խոսքերը վերցված է (Վեսլիի քսանհինգ դրույթների միջոցով) Անգլիկան եկեղեցու երեսունինը դրույթների Հավատքի Դրույթներ VI-ից:

> Սուրբ Գիրքը, մեր փրկության համար պարունակում է բոլոր անհրաժեշտ բաները, որովհետև այն, ինչ չի պարունակում է Սուրբ Գրքում և նրանով չի կարող հաստատվել, չի կարող պահանջվել մարդուց, հետևաբար

չի կարող լինել հավատքի դրույթ, կամ փրկության համար չի կարող համարվել անհրաժեշտ:

Այսպիսով պաշտպանվում է Բարեփոխության գլխավոր սկզբունքներից մեկը, *sola scriptura-ն*, այն մասին, որ քրիստոնեական ուսմունքի և վարդապետության հիմնական աղբյուրը դա՝ Սուրբ Գիրքն է: Խոսվում է, որ միայն այն, ինչ կարելի է կարդալ Սուրբ Գրքում, կամ այն, ինչ կարելի է հաստատել Սուրբ Գրքում, պետք է համարվի հավատքի դրույթ, կամ այն ինչ անհրաժեշտ է փրկության համար: Իհարկե, որպես Վեսլիի հետևորդներ, մենք գիտենք, որ (այնպես ինչպես և միացյալ եկեղեցու այլ աստվածաբանական ավանդությունները) Սուրբ Գիրքը պետք է մեկնաբանվի: Մենք Սուրբ Գիրքը մեկնաբանում ենք որպես Աստծո ժողովուրդ, ղեկավարվելով եկեղեցու *ավանդություններով, մեր փորձառության* լույսի ներքո և օգտագործելով մեր լուսավորված *բանականությունը*: Բայց համաձայն այս առաջարկության, ոչ մի բան ինքն իրեն քրիստոնեական վարդապետության համար չի կարող լինել սկզբնաղբյուր կամ հիմք, և եթե մենք նայենք Նազովրեցու Եկեղեցու այլ Հավատքի Դրույթերին, ապա մենք կտեսնենք, որ դա այդպես էլ կա: Նրանք բոլորը վերցված են Սուրբ Գրքից: Քրիստոնեական ավանդույթը մեզ այսօր օգնում է մեկնաբանելու Սուրբ Գիրքը և մարդկային բանականությունն ու փորձը ներգրավված են այդ մեկնաբանության և մեր վարդապետությունների ձևավորման մեջ: Բանականությունը և փորձը ազդեցին այն բանի վրա, թե ինչպես են այդ հավատքի Դրույթները ձևավորվել և նրանք մինչև այսօր ազդում են այն բանի վրա, թե մենք ինչպես ենք խոսում մեր վարդապետությունների մասին, և նրանք նույնիսկ կարող են հաստատել դա: Բայց ցանկացած վարդապետություն, որը մենք այսօր մեր Հավատքի Դրույթներում որպես հարանվանություն դավանում ենք, իրականում հիմնված են Սուրբ Գրքի վրա և վերցված են այնտեղից:

Այսպիսով, դրանում է կայանում Հավատքի Դրույթ IV զորավոր կողմը և որպես Հանձնաժողով, մենք հավատում ենք, որ երբ այդ Դրույթը ամբողջապես հասկացված է, ապա այն բավականաչափ պաշտպանում է այն աստվածաբանությունից, որը հեռանում է Սուրբ Գրքից: Նրա ուժեղ կողմերը և հստակ ձևակերպումը պետք է հասկացվեն և գնահատվեն բոլորի կողմից, ովքեր քարոզում են Նազովրեցու ամբիոններից և դասավանդում են Նազովրեցու համալսարաններում և քոլեջներում: Այսպիսով, այս հանձնաժողովը հավատում է, որ դա ոչ միայն ավելորդ չէ, սակայն մենք չենք կարող հավատարիմ մնալ վեսլիական ավանդությանը և դա համատեղելի չի լինի վեսլիական աստվածաբանությանը և դրա համար Սուրբ Գրքում հիմնավորում չկա, եթե մենք ավելացնենք ցանկացած պնդումը այն մասին, որ Սուրբ Գիրքը "ամեն ինչում անսխալական է", և ոչ միայն բացահայտելու Աստծո կամքը մեր փրկության համար, և որ Սուրբ Գիրքը տալիս է ճշմարիտ պատասխան ցանկացած հաստատության վերաբերյալ: Սա նման կլիներ նրան, որ մենք Աստվածաշունչը փրկարար խոսքից դարձնեինք ամսագիր կամ հանրագիտարան: Եթե ասենք, որ Սուրբ Գրքը հանդիսանում է "գլխավոր հեղինակություն ամեն

ինչում, ինչ սովորեցնում է Սուրբ Գիրքը", ապա հարց է առաջանում, ի՞նչ է կոնկրետ սովորեցնում Սուրբ Գիրքը, և այս հարցով քրիստոնյաների մեջ (նույնիսկ Նազովրեցիների) կան մի քանի անավարտ երկխոսություններ: Սուրբ Գրքի յուրաքանչյուր մասի անսխալականության մասին հաստատումները ("անսխալական ամեն ինչում"), բերում է ավելի մեծ բարդույթների, այլ ոչ թե լուծում է դրանք և մարդկանց ներքաշում է շեղող և անիմաստ բանավեճերի մեջ:

Որպեսզի հաստատենք այդպիսի եզրահանգումները, մեզ անհրաժեշտ է մանրամասնորեն քննարկել բանալի պարագրաֆը: Մեզ անհրաժեշտ է հասկանալ, թե որտեղի՞ց է հայտնվել "անսխալականության" կամ "անմեղսունակության" դետալային կամ ամբողջական պահանջները, ինչու՞ է այն հանդիսանում ոչ անհրաժեշտ և մոլորության տանող, և որն է Նազովրեցի աստվածաբանների հայացքները այդ հարցի վերաբերյալ:

2. ԴԵՏԱԼՆԵՐՈՒՄ ԱՆՍԽԱԼԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱԼՎԻՆԻՍՏԱԿԱՆ ԾԱԳՈՒՄԸ

"Անսխալականության" մասին ընթացող բանավեճերը, վերջին տասնամյակներում հատկապես սուր էին Հյուսիսային Ամերիկայում և նրանք հրահրվեցին, երբ 1974 թվականին լույս տեսավ Հարոլդ Լինդսելի "Ճակատամարտ Աստվածաշնչի համար"; և առաջին հայացքից կարող է թվալ, որ այդպիսի անսխալականության հաստատումը արժանի է գովեստի:

Սակայն անհրաժեշտ է հասկանալ, որ Սուրբ Գրքի ամեն դետալի (անսխալականություն ամեն ինչի մեջ) բացարձակ անսխալականության մասին հաստատումը, բխում է կոնկրետ կալվինիստական մշակույթից: Այն հանդիսանում է կոնկրետ կալվինիստական մեթոդի մաս, և այն չի կարող հասկանալի լինել այդ աստվածաբանության մեջ իր տեղի կտրվածքից և այն ռացիոնալիզմից, որը բնութագրում է այդ աստվածաբանությունը:

Կալվինիստական աստվածաբանները, ովքեր դասավանդում էին Պրինստոնում տասնիններորդ դարի վերջում և քսանի սկզբներում՝ Չարլզ Խոդժը (1797-1878) և Բ.Բ. Ուորֆիլդը (1851-1921), ժառանգել էին այդ հաստատումը կալվինիստների նախորդ սերունդից, ինչպես շվեցարա-իտալական աստվածաբան Ֆրենսիս Տուրրետին (1623-1687), և այն անմիջականորեն կապված է նրանց կալվինիստական բարդույթների հետ: Կալվինից հետո ապրող կալվինիստական աստվածաբանները, պատերազմում էին ընդդեմ Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու, և նրա համար էին պաշտպանում Սուրբ Գրքի հեղինակությունը, որպեսզի հակադրեին այդ հեղինակությամբ Պապին և կարդինալներին: Նրանց ապոլոգետիկական ստրատեգիան դրդեց նրանց պաշտպանելու Սուրբ Գրքի հեղինակությունը, որպես Հիսուս Քրիստոսի հավատքի հիմք, այլ ոչ թե այն, ինչ ենթադրում է հավատք՝ դեպի

Քրիստոսը: Համաձայն նրանց մեթոդի, սկզբում անհրաժեշտ է հաստատել Աստվածաշնչի ճշմարտացիությունը և հեղինակությունը, իսկ այնուհետև, այդ հիմքի վրա կառուցել հավատք՝ դեպի Քրիստոսը: Համաձայն նրանց մեթոդի, սկզբում պետք է հաստատվի Աստվածաշնչի հեղինակությունն ու ճշմարտացիությունը, իսկ այնուհետև, այդ հիմքի վրա կառուցել հավատք՝ դեպի Հիսուսը: Այսպիսով, առաջին տեղ մղվեցին մտավոր համոզմունքները և ապոլոգետիկան: Որոշ լյութերականներ առանձնացան Մարտին Լյութերից և մնացին այդ դիրքորոշման մեջ: Ռեֆորմացիայից հետո, համապատասխան դրան, շատ ռեֆորմացիոն Հավատքի Հանգանակությունները սկսվում են Սուրբ Գրքի մասին հավատքի Հանգանակությամբ: Հենց այս համատեքստում նրանք սկսեցին հաստատել, որ Սուրբ Գիրքը ճշգրիտ և անսխալական է: Համաձայն նրան, դեդուկտիվ աստվածաբանական մեթոդի, նրանք հաստատում էին, որ Աստված կատարյալ է և Աստվածաշունչը եկել է նրանից, ապա Աստվածաշունչը պետք է լինի «կատարյալ» այն իմաստով, որ նա պետք է լինի առանց սխալների նույնիսկ մանր դետալների մեջ: Դա ենթադրություն էր, որը նրանք ներմուծեցին Սուրբ Գրքի վերաբերյալ, այլ ոչ թե մտային եզրահանգում, որը կայացել էր աստվածաշնչյան տեքստի ուսումնասիրության հիմքի վրա: Ոչ բոլոր կալվինիստները բռնեցին այդ դիրքը: Հոլանդական և Շոտլանդական կալվինիստական ավանդությունները (Հերման Բավինկ, Աբրահամ Կուիպերը և Ջեյմս Օրր) տարբերվում են, և նրանք իրենց հասկացողությամբ ավելի մոտ են Ժան Կալվինին և ռեֆորմատորներին: Սուրբ Գրքի անսխալականության այդպիսի պաշտպանությունը հատկապես ուժեղ էր ամերիկյան կալվինիստների մեջ, որը հնարավոր է օգնել բացատրելու, թե՞ ինչու է ֆունդամենտալիզմը գերիշխող ամերիկյան ֆենոմեն:

Մայրցամաքում (Եվրոպայում) ռեֆորմատորները՝ Ժան Կալվինը, Մարտին Լյութերը, Ուիլիրիխ Ցվինգլին և այլոք, այդպիսի հայտարարություններ չեն արել, և այդ ամենը, չի հռչակվում Անգլիկան Եկեղեցու Երեսունինը Հավատքի Դրույթներից Հավատքի Դրույթ VI-ում: Այդ ամենը նոր հայտարարություն էր, որը կատարվել էր ռեֆորմացիայից հետո: Ռեֆորմատորների համար, Քրիստոսի հավատքը տանում էր դեպի Սուրբ Գրքի ճշմարտությունը: Մարտին Լյութերը սկզբում հռչակեց, որ արդարացումը հավատքից (*sola fide*) է և միայն երբ նա հասկացավ, որ Պապը մերժեց այդ հաստատումը, նա անհրաժեշտություն տեսավ հնազանդեցնելու եկեղեցու հեղինակությունը Սուրբ Գրքի հեղինակությանը (*sola scriptura*): Կալվինիստական ավանդության հետագա աստվածաբանների մոտ Աստվածաշնչի անսխալականության մասին հավատքը հիմք հանդիսացավ Քրիստոսի հավատքի համար: Անցած դարի քսանական թվականներին, այդ կալվինիստական ավանդությունից, Պրինստոնի կալվինիստական աստվածաբանների միջոցով, ֆունդամենտալիստները վերցրեցին իրեն հավատքը Սուրբ Գրքի ամբողջական և դետալային անսխալականության մասին: Անցած դարի 70-ական թվականներին Հարոլդ Լանդսելը բոլոր ավետարանական քրիստոնյաներին փորձեց համոզել,

առաջնորդվել կոնկրետ այդ կալվինիստական հավատամքին և ավետարանական քրիստոնյաների մեջ, համենայնդեպս Միացյալ Նահանգներում, կատարեց լուրջ բաժանումներ: Իրադարձությունների այդպիսի զարգացումը և ունենալով մտահոգություն անսխալականության մասին փաստերում և դետալներում, ցույց է տալիս, թե ինչքանով է կալվինիստական ավանդությունը ձևավորվել մոդեռնի ժամանակաշրջանի ռացիոնալիստական մոտեցմամբ:

Վեսլիի հետևորդները ավելի մոտ են ռեֆորմատորների այդ ճշմարտության նախնական հասկացողությանը: Մենք գիտենք, որ մենք հավատքին չենք գալիս ելնելով Սուրբ Գրքի անսխալականությունից, որը մեզ ապացուցվել է, այլ մեր Հավատքը դեպի Քրիստոս բերում է մեզ նրան, որ մենք վստահում ենք Նրա պատգամին, մարգարեներին և առաքյալներին, և բոլոր նրանց, ովքեր գրել են այդ Սուրբ Գիրքը: Դա *չի նշանակում*, որ մենք որպես հարանվանություն մենք հետևում ենք այն հակադիր հայացքին, որ Սուրբ Գրքին *չարժի* վստահել, կամ նրանք պատմականորեն *ճշգրիտ* չեն: Ոչ՝. Մենք հետևում ենք այն հավատքին, որ Սուրբ Գիրքը մեզ ներկայացնում է բավական ճշգրիտ պատմվածք, Իսրայելի պատմության մեջ Աստծո գործողությունների մասին, հատկապես Տիրոջ ծննդի, կյանքի, մահվան և մարմնով հարուցման մասին: Ավելի շուտ, մենք չենք հավատում նրան, որ առաջին պլանում տեղադրելով դետալներում անսխալականության հարցը համարվում է օգտակար, կամ անհրաժեշտ նրա համար, որպեսզի պաշտպանվի Սուրբ Գրքի ամբողջականության հեղինակությունը և ճշգրտությունը: Դրա համար էլ Անգլիկան Եկեղեցու Երեսուն ինը Հավատքի Դրույթներից Հավատքի դրույթներ VI անվանվում է "Սուրբ Գրքի բավարարության մասին", և "բավարարության" այդ գաղափարը նաև հայտնվում է Ջոն Վեսլիի կողմից ամերիկյան մեթոդիստներին տրված Երեսուն հինգ Հավատքի Դրույթների Հավատքի Դրույթ համար հինգում:[3]

3. ԻՆՉՈՒ՞ Է ԱՅԴ ԿԱԼՎԻՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՄՔԸ ՈՉ ՃՇԳՐԻՏ ՄԻՋՈՑ, ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սուրբ Գրքի հեղինակության այդպիսի հաստատման մեջ, կա երկու լուրջ անբավարարություն, երբ մենք հռչակում ենք նրա անսխալականությունը դետալների մեջ, այլ ոչ թե "բավարարության"-ը: Առաջինը, "սխալների" մասին կոնցեպցիան չի օգնում, որովհետև անհնար է սահմանել, թե՞ ինչ է իրենից ներկայացնում "սխալը": Այդ բառը, երևի է ենթադրում է բացարձակ ճշգրտության անհրաժեշտություն, բայց ինչպիսի՞ն պետք է լինի այդ ճշտության աստիճանը: Մենք պնդու՞մ ենք այն ճշգրտությունը, որը հատուկ է ժամանակակից գիտական լեզվին և

[3] Փրկության համար "Բավարարության" կոնցեպցիայի կարևորությունը տես Պաուլ Մերրիտ Բասսետի գրքում: (Paul Merritt Bassett, 'The Theological Identity of the North American Holiness Movement: Its Understanding of the Nature and Role of the Bible,' *Varieties of American Evangelicalism* (Knoxville, TN, 1991), 72-108, especially pages 76-79.)

որը լրիվ օտար է ամբողջ հին գրականությանը: Ընդունելի՞ է ամբողջացնել թվերը: Արդյո՞ք պետք է բոլոր պատմվածքներում պահպանել խրոնոլոգիան: Թույլատրելի՞ է օգտագործել մետաֆորաները և առակները: Պե՞տք է, որ մենք պնդենք, որ Հիսուսի պատմած պատմվածքները պետք է համապատասխանեն փաստերին: Եթե մենք համաձայն ենք, որ Սուրբ Գիրքը պարունակում է շատ մետաֆորաներ, առակներ և խոսքի այլ ձևեր, ապա որտե՞ղ ենք մենք պատրաստվում անցկացնել բաժանող գիծը, ո՞րն է բառացի փաստը և ո՞րն է մետաֆորա, առակ, պոեզիա և տեսիլք: "Սխալի" մասին կոնցեպցիան՝ դա *բացարձակ* հասկացողություն է, որը ընդունելի է ինչ որ բանի համար, որը տարբեր աստիճաններում ունի ինչ որ բան, և հետևաբար դա պարզապես մոձավանջ է, քանի որ դա մեզ ուղղակիորեն բերում է մեզ հիմար ու անմիտ հարցերի: Այստեղ է ամփոփված երկրորդ թերությունը: Դետալներում "անսխալականության" սխալ գաղափարը, գոյություն չունեցող դետալներում, շեղում է մեր ուշադրությունը դեպի անօգուտ վիճաբանություններ: Քահանա՞ էր արդյոք Աբիաթարը կամ Աբիմելեքը, ե՞րբ էր Դավիթը կերել հացերը: Երկու հրեշտակնե՞րն էին Տիրոջ գերեզմանի մոտ, թե՞ մեկը: Զատիկի հաջորդ առավոտյան մի քանի կին էին Տիրոջ գերեզմանի մոտ, թե՞ մեկը: Հուդան կախվել էր, թե՞ այլ կերպ էր մեռել: Անհաշիվ քանակությամբ վիճաբանություններ կան, որոնք ոչ մի կապ չունեն Ավետարանի ճշմարտության հետ,, և դա պարզապես ուղղակի ժամանակի անօգուտ վատնում է: Քանի որ, մենք գործ ունենք հին գրականության հետ, հաճախ մենք չենք ունենում բավական տեղեկատվություն, որպեսզի պարզաբանենք, թե այդ տեսանելի հակասությունները հանդիսանու՞մ են որպես հակասություններ, թե ոչ:

Բացարձակ անսխալականության մասին հաստատումը նշանակում է, որ մենք կներգրավվենք մանր ու անօգուտ վիճաբանությունների մեջ, որը եղել էր Եփեսոսում, երբ "զբաղվում էին անվերջանալի առակներով և ծագումնաբանություններով, որոնք ավելի շատ վիճաբանություններ էին առաջացնում", և " ոմանք էլ շեղվել էին և զբաղվում էին դատարկաբանությամբ" (1 Տիմ. 1:4-6): Մենք համոզվում ենք Սուրբ Գրքի ճշմարտացիությանը, երբ այն քարոզվում է Հոգու զորությամբ, և երբ մենք երես առ երես հանդիպում ենք Տիրոջ հետ: Մենք պարզապես չգիտենք, " որ Քրիստոսը մեր մեղքերի համար մեռավ Գրքերի համեմատ: Եվ թե երևաց Կեփասին, հետո այն տասներկուսին " (1 Կոր. 15:3-5): Պողոսը այս ամենը մեզ է փոխանցում որպես Ավետարանի գլխավոր փաստեր, և մենք հավատում ենք, որ նրանց պատմականության մեջ կասկածանքի պատճառ չկա: Սակայն, հարցը նրանում չէ, թե ի՞նչ են մեզ պատմել ճշգրիտ փաստերը: Ավելի շուտ, այդ պատմվածքի միջոցով, մենք գալիս ենք դեպի Հարուցյալ Տիրոջ հետ հանդիպման, ճանաչողության, վստահության և հավատքի: Նույն կերպ, մեր Ավետարանի վերապատումը սերմանում է վստահություն, երբ մենք կիսվում ենք Բարի Լուրով, այլ ոչ թե նրա համար, թե քա՞նի հրեշտակ է եղել դագաղի մոտ: Սուրբ Գրքի հեղինակությունը հաստատվում է Սուրբ Հոգով, երբ մենք պատմում ենք այդ "հին, հին պատմությունը":

Մենք հարգում ենք մեր քույր եղբայրներին, որոնք սիրում են Սուրբ Գիրքը և ցանկանում են պաշտպանել նրա հեղինակությունը, սակայն, որպես Վեսլիի հետնորդներ, մենք համոզված ենք նրանում, որ պաշտպանության համար ընտրել կալվինիստական մոտեցում, կնշանակի սխալ վարվել:

4. ՆԱԶՈՎՐԵՑԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍԱԿԵՏԸ

Դա ճիշտ է, որ անցած դար քսանական թվականներին, ֆունդամենտալիստների և մոդեռնիստների միջև թեժացած ճակատամարտի ժամանակ, Նազովրեցի առաջնորդները արտահայտեցին իրենց համախմբվածությունը Ֆունդամենտալիստների հետ: Եթե քննարկենք Գ. Ռիչարդ Նիբուրի նկարագրած այլընտրանքը, որը իրենից ներկայացնում են մոդեռնիստական և լիբերալ մոտեցումները, ապա այն հնչում է այսպես. "Աստված առանց ցասման, առանց խաչի, միայն Քրիստոսի ծառայության միջոցով մարդուն առանց մեղքի Աստված բերեց արքայություն առանց դատի, « — դա դժվար թե մեզ զարմացնի: Սակայն, մեր հարանվանության աստվածաբաններից մեկի՝ Գ. Օրտոնի մոտ, կար այդ բարդույթի ավելի խոր հասկացողություն:[4]

Որպես հակակշիռ մոդեռնիստների, վեսլիական աստվածաբանության հետնորդները ձգտում են աջակցել Աստվածաշնչի հեղինակությանը, բայց ոչ հեշտացված ճանապարհով, որը ձգտում են անել ֆունդամենտալիստները: Պաուլ Մ. Բասսետը գրում է, որ հետևելով այնպիսի վեսլիական աստվածաբանների ինչպես Ռիչարդ Վաթսոնը, Ու. Բ. Պոպեն և Ջոն Միլին "Ուիլլին, հաստատ գտնվում է նրանց ցուցակում, ով մի կողմից դեմ է հանդես գալիս ամերիկյան լիբերալ աստվածաբանությանը և մյուս կողմից, ով դեմ է հանդես գալիս ֆունդամենտալիստներին": Իր *Քրիստոնեական Աստվածաբանության* մեջ նա քննադատում է բողոքական սխոլաստներին, ովքեր ապրել էին Ռեֆորմացիայից 100 տարի հետո, նրա համար, որ նրանք սկսեցին "փոխել Քրիստոսի Կենդանի Խոսքը գրված Խոսքով":[5] Գ. Օրտոն Ուիլին իր գրելու համատեքստում (ինչպես նշում էր Ռաուլ Բասսետը), քննադատում էր նաև իր ժամանակի ֆունդամենտալիստներին, ովքեր կալվինիստական սխոլաստիկական մտքից[6] ժառանգել էին դետալներում Սուրբ Գրքի անսխալականության տեսակետը: Նա այնքան հեռու է գնում, որ զգուշացնում է ընդդեմ երեք "արժանի միապետների մասին", որոնք մենք կարող ենք փոխարինել Քրիստոսի, Կենդամի Խոսքի հետ. Եկեղեցին, Սուրբ Գիրքը և բանականությունը: Կան պատճառներ, որոնց միջոցով կարող ենք հանգել

[4] Որպեսզի հասկանաք թե ինչպես էր ֆունդամենտալիզմի գաղափարները հայտնվել Նազովրեցու Եկեղեցու սրբության շարժման մեջ, տես Ռաուլ Բասսետի հոդվածը: Paul Merritt Bassett, 'The Fundamentalist Leavening of the Holiness Movement, 1914-1940: The Church of the Nazarene: A Case Study,' *Wesleyan Theological Journal (WTJ)* 13:1 (1978), pages 65-91; and Stan Ingersol, 'Strange Bedfellows: The Nazarenes and Fundamentalism,' *WTJ* 40:2 (2005), pages 123-141.
[5] Bassett, 'Theological Identity,'cf. 91.
[6] Bassett 'Theological Identity,' 91-94, referring to Wiley, *Christian Theology*, pages 1:140-142.

եզրակացության, որ Գ. Օրտոն Ուիլին կազմել է Հավատքի Դրույթներ IV, 1928 թվականի Գլխավոր Ասամբլեայի համար, որը նույնպես լավ պատճառ է հանդիսանում նրա համար, որպեսզի ուղղումներ չկատարվեն Հավատքի Դրույթներ IV-ում:

Նմանօրինակ ձևով, Տիմոտի Լ. Սմիթը իր նամակում ուղղված *Քրիստոնեությունն Այսօր* ամսագրի խմբագրին, որը լույս է տեսնում 1978 թվականի մարտի 10-ին, հաստատում է, որ վեսլիական աստվածաբանները մերժում են ինչպես "լիբերալ", այնպես էլ "մոդեռնիստական" տեսակետը, ինչպես նաև Սուրբ Գրքի անսխալականության նեղ հայացքը կապված Բ.Բ. Ուորֆիլդի Հարոլդ Լինդսելի հետ: Տիմոտի Սմիթը գրում է. "… մենք, վեսլիական սատվածաբաններս, աջակցում ենք ավելի հին և ավելի լայն ավետարանական ավանդությանը, քան ժամանակակից նեօ-կալվինիստական սխոլաստիկները": *Քրիստոնեական Հարյուրամյակ* ամսագրի խմբագրին ուղված նամակում, նա հաստատում էր, որ "Սուրբ Գրքի հեղինակության ոչ ֆունդամենտալ տեսակետը, որը ընդունված է շատ ավետարանական քրիստոնյաների կողմից, ամփոփված է ռեֆորմատորների աշխատանքներում, և որ Խոջա- Ուորֆիլդի հայացքները Սուրբ Գրքի անսխալականության մասին երբեք չեն պաշտպանել այնպիսի ավետարանական առաջնորդներ՝ ինչպես Վիլյամ Բուտը, ադոնիրամ Դ. Գորդոնը, Դվայտ Լ. Մուդին կամ Ազգային Սրբության Ասոցացիայի առաջնորդները: Նա մերժեց ժամանակակից աստվածաբանների փորձերը, ովքեր պաշտպանում էին Հարոլդ Լինդսելլի և Ֆրենսիս Շաեֆֆերի անսխալականության տեսակետը, "պարտադրել ժամանակակից ավետարանական քրիստոնյաներին Սուրբ Գրքի այնպիսի տեսակետ, որից Հիսուսը և Պողոսը հրաժարվել էին, և որը բնորոշ է ռաբունիների հուդայիզմին":[7]

Նմանօրինակ ձևով, Ռալֆ Էռլը մեջբերում է կատարում հին Նազովրեցի աստվածաբան Ա. Մ. Հիլսից, որ Սուրբ Գիրքը անսխալական է նրանում, որ նա մեզ խոսում է Աստծո և փրկության մասին, սակայն յուրաքանչյուր դետալի մեջ անսխալական չէ:

> Աստվածաշնչի համար ի՞նչ կարգի անսխալականություն ենք մենք հռչակում: Նրա անսխալականությունը կապված է այն նպատակի հետ, որի համար նա գրվել է: Նա անսխալական է որպես հայտնություն, այս մեղավոր աշխարհի համար՝ Քրիստոսով Աստծո փրկարար սեր: Նա անսխալականորեն առաջնորդում է բոլոր դա ցանկացող, ազնիվ, Քրիստոսին փրկող հոգիները սրբության և երկինք:[8]

---

[7] Timothy L. Smith, “Reader’s Response: Determining Biblical Authority’s Base,” *The Christian Century* 95 (March 2, 1977): page 198.
[8] A.M. Hills, *Fundamental Christian Theology*, Pasadena: C.J. Kline, 1931, page I:134.

Ռալֆ Էռլը շարունակում է այդ միտքը և պաշտպանում է ավետարանական աստվածաբանին, ով համաձայն է նրա հետ, որ Սուրբ Գրքում կան սխալներ կապված հռետորիկայի, պատմության և գիտության հետ: Միևնույն ժամանակ նա մտածում էր, որ այդ աստվածաբանը կատարել էր շատ զիջումներ քան պետք էր, և համաձայնվել էր նրա հետ, որը հակադրություն է այնտեղ, որտեղ պատմական պատմությունները կարելի է համաձայնեցնել մանրազնին հերմենևտիկական հետազոտությունների միջոցով: [9]

Ջ. Կեննետ Գրիդերը նույն ձևով մերժեց անսխալականությունը դետալներում: Նա ուշադրություն դարձրեց Ջոն Վեսլիի մեկ նախադասության վրա, որը մեջբերել էր Հարոլդ Լինդսելլը, և որը իբր թե խոսում է դետալներում անսխալականության մասին, բայց նա ապացուցում է, որ երբ այդ նախադասությունը քննարկվում է Ջոն Վեսլիի աստվածաբանության ամբողջ համատեքստում, պարզ է դառնում, որ նա չի սովորեցնում դետալներում անսխալականության մասին և այն չի հանդիսանում նրա աստվածաբանական մեթոդի մի մասնիկը, որը ավելի բնորոշ է կալվինիստական սխոլաստիկներին: Կեննետ Գրիդերը ասում է. "Սուրբ Գիրքը ինքն իրենով, հետաքրքրված չէ անսխալականությամբ: Այն խոսում է աստվածային ներշնչման, այլ ոչ թե անսխալականության մասին, համենայն դեպս խոսքը գնում է ոչ բացարձակ անսխալականության": Ջ. Կեննետ Գրիդերը քննարկում է այդ գաղափարը 2 Տիմ. 3:16-ից և մատնանշում է այն, որ համաձայն այդ տեքստի, դա հատուկ ներշնչանք է ուսմունքի և պրակտիկ գործողության համար:[10]

Ռոբ Լ. Ստեյպլսը վեսլիական աստվածաբանությունը հակադրում է ֆունդամենտալիզմին, որը առաջացել է կալվինիստական հիմքի վրա և պնդում էր "էպիստոմոլգիական անսխալականությունը": Վեսլիական աստվածաբանությունը այլ կերպ է դատում և պաշտպանում է այն տեսակետը, որը նա անվանում է "սոտերիոլոգիական անսխալականություն":[11]

Մեկ այլ հոդված նա սկսում է Մարտին Լյութերի մեջբերումից. "Սուրբ Գիրքը օրորոց է, որի մեջ դրված է Քրիստոսը": Ռոբ Ստեյպելսը մեկնաբանում է. "Մարտին Լյութերի այլաբանության էությունը կայանում է նրանում, որ Քրիստոսը, ով Կենդանի Խոսքն է, պետք է գտնցվի Սուրբ Գրքում, որը գրված Խոսքն է: Բայց Սուրբ Գիրքը գործիք է, որը մեզ առաջնորդում է դեպի Քրիստոսը, այլ ոչ թե ինքն իրենով ինքնանպատակ է: "[12]

Պոլ Մ. Բասսետը իր հոդվածում հաստատում է Սուրբ Գրքի հասկացողության մասին սրբության շարժմամբ, որ նրա պատմությունը և ներքին լոգիկան հանգեցրել են այն եզրակացության, "որ այնպիսի կոչը ինչպիսին է Լինդսելլի մոտ, (անսխալականություն դետալներում) անհամատեղելի է ինչպես

[9] Ralph Earle, “Further Thoughts on Biblical Inspiration,” *Journal of the Evangelical Theological Society*, Vol. 6, No. 1 (Winter 1963): pages 7-17, (especially page 15).
[10] J. Kenneth Grider, ‘Wesleyanism and the Inerrancy Issue, *WTJ* 19:2 (1984), pages 52-61.
[11] Rob L. Staples, ‘Inerrancy,’ *Holiness Today*, June 1998, page 5.
[12] Rob L. Staples, ‘Scripture,’ *Holiness Today*, December 1998, page 11.

աստվածաբանական, այնպես էլ հոգևոր տեսանկյուններից": Պոլ Բասսետը շարունակում է.

> Նրա պատմությունը և ներքին լոգիկան հանգեցրին այն եզրակացության, որ եթե ճիշտ օգտագործվի անսխալականություն տերմինը, ապա դա կնշանակի, որ Սուրբ Գիրքը ծառայում է, որպես Սուրբ Հոգու յուրահատուկ ստեղծագործություն, որը Նրա միջոցով մերկացնում է մեղքը, հայտնում է Քրիստոսով փրկության բարի լուրը, և ցուցումներ է տալիս թե ինչպես շփվենք Աստծո և մերձավորի հետ արդարությամբ, և ճշմարիտ սրբությամբ: Այս հարցերում Սուրբ Գիրքը պետք է ընկալվի որպես բացարձակ անսխալական:

Պոլ Բասսետը շարունակում է այդ գաղափարը, որպեսզի բացառի դետալներում անսխալականությունը ("անսխալականություն ամեն ինչում").

> Այդ շարժումը հանգեց հետևյալ եզրակացության, քանի որ սատերիոլոգիական և նույնիսկ մետաֆիզիկական տեսակետների համար, էմպիրիկ և գիտական հստակ տվյալները ամենակարևորը չեն, ապա նրանց պետք է այլ կերպ վերաբերվել, քան սովորական գիտական տվյալների հետ… Սրբության շարժումից մարդկանց մեծամասնությունը պնդում էր, որ այդպիսի հարցերը պետք է քննարկվեն, հաշվի առնելով Սուրբ Գրքի գլխավոր նպատակը, որը չի պարունակում ճշգրիտ գիտելիքներ երկնքի և երկրի վերաբերյալ, սակայն պարունակում է բավականաչափ սատերիոլոգիական գիտելիքներ: [13]

Գ. Ռեյ Դանինգը նշում է, որ որոշ ավետարանական քրիստոնյաներ հիմնավորում են Սուրբ Գրքի հեղինակությունը նրա անսխալականության վրա, բայց նա հանգում է այն եզրակացության, որ "պաշտպանության համար այդպիսի ռացիոնալ մոտեցումը համոզիչ չէ":[14]

Գ. Ռեյ Դանինգը շարունակում է և մեջբերում է կատարում Ա. Մ. Հիլսին, Կլարկ Գ. Պիննոկին, Ռիչարդ Ս. Թեյլորին, Գ. Օրտոնա Վիլիին և նույնիսկ Ժան Կալվինին, որպեսզի աջակցի Սուրբ Գրքի հեղինակության այլընտրանքային տեսակետը, որը կայանում է նրանում, ինչն էլ մեզ համոզում է այդ հեղինակությունը *testimonium internum Spiritus sancti,* այսինքն Սուրբ Հոգու ներքին վկայությունը: Դանինգը դա դիտարկում է, որպես նախնական շնորհքի մասին ուսմունքի տեսակետ: [15]

Մենք հանգում ենք այն եզրակացությանը, որ Նազովրեցի աստվածաբանները իրենց մեծամասնությամբ որոշակի բացառություններով, ամբողջապես դեմ են այն գաղափարին, որ մեզ անհրաժեշտ է հաստատել Սուրբ Գրքի բառացի, ամբողջական անսխալականությունը բոլոր դետալներում նրա համար, որպեսզի պաշտպանվի նրա

---

[13] Paul Merritt Bassett, ‘Theological Identity, ‘94f.
[14] H. Ray Dunning, *Grace, Faith, and Holiness* (Kansas City: Beacon Hill, 1988), page 62.
[15] Ibid, pages 58-65.

հեղինակությունը: Որպես մեկ ամբողջականություն, նրանք պաշտպանում են նրա հեղինակությունը հավատքի, վարդապետության, էթիկայի, վարդապետության և պրակտիկ հարցերում: Այն հարցը, թե ամեն հստատման մեջ Սուրբ Գիրքը հստակ է թե ոչ, եկեղեցու համար անհրաժեշտ չէ հաստատել պաշտոնական Հավատքի դրույթներում, քանի որ դա բացարձակապես անտեղի է: "*Սրբության Ազդարար*" ամսագրի երկու խմբագիրներ շատ ճիշտ ընդգծեցին, որ Հավատքի Դրույթներ IV, որը հիմա մենք ունենք, իր իմաստով շատ լայնածավալ է: Ու.Ե. ՄակԿամբերը "Պատասխանների անկյուն"-ում գրում է, որ Հավատքի Դրույթներ IV մեզ չի ստիպում լինել կողմ կամ դեմ Սուրբ Գրքի բացարձակ անսխալականությանը, և կարելի է սպասել, որ մեր մեջ կլինեն երկու կոնցեպցիաների՝ "ամբողջապես աստվածային ոգեշնչման" կողմնակիցներ: Նա անձամբ եզրակացություն է անում, որ "այն ամբողջապես անսխալական չէ, սակայն նա անսխալականորեն հասնում է իր նպատակին, երբ Սուրբ Հոգին օգտագործում է նրան, որպեսզի մերկացնի մեղքը և առաջնորդի դեպի Քրիստոսը, հնարավոր դարձնելով մեր փրկությունը:[16] Վեսլի Թրեյսին "*Հարցերի արկղ*" բաժնում շատ պարզ կիսվում է իր տեսակետով, որ "կալվինիստական ֆունդամենտալիստների համար, ովքեր զբաղեցնում են կոշտ դիրքորոշում և ովքեր պատկանում են աջ թևին, Սուրբ Գրքի անսխալականությունը դարձրել են ապրանքանիշ և մարտական կանչ, և այդ դիրքորոշումը չի պատկանում վեսլիական ավանդությանը": Այնուամենայնիվ նա ասում է, որ Հավատքի Դրույթներ IV "բավականին ընդարձակ է": Որպես կոշտ ֆունդամենտալիստներ, ովքեր հավատում են անսխալականության, կարող են համաձայնվել հավատքի այս դրույթի հետ, ինչպես նաև նրանք, ովքեր "այդ տիրույթում ունեն ավելի քիչ կոշտ դիրքորոշում… նաև կարող են տեղավորվել այդ տիրույթում առանց արմունկներով հրմշտվելով":[17]

Դա մեզ հանգեցնում է եզրափակիչ մտքերի: Դետալներում անսխալականության գաղափարը ոչ միայն չի համընկնում վեսլիական աստվածաբանության տեսակետի հետ, այլև մերժվում է առաջատար նազովրեցի աստվածաբանների կողմից: Սակայն եթե, կատարվի փոփոխություն Հավատքի Դրույթներ IV-ում, ապա դա մեզ կսահմանափակի և կգամի Սուրբ Գրքի նկատմամբ կոնկրետ հասկացողության և ներկայումս գոյություն ունեցող ավելի լայն տեսակետը, որը իր մեջ կարող է պարունակել երկու տեսակետներն էլ, կփոխարինվի ավելի նեղ ֆունդամենտալիստական հայացքով: Քանի որ, Նազովրեցի աստվածաբանները և Սուրբ Գրքի ուսումնասիրողները, առաջնորդող հովիվները և այցելուները ամբողջապես դեմ կլինեն այդ Հավատքի Դրույթի նեղացմանը, ապա այդպիսի գործողությունը բաժանման վտանգ կներկայացներ հարանվանության ներսում: Այլ հարանվանություններում տեսանելի է այդպիսի բաժանման լուրջ ճգնաժամը և ցավը, որը մատնանշում է , թե հետևանքները ինչքան

[16] W.E. McCumber, *Herald of Holiness* March 15, 1985, page 31.
[17] Wesley Tracy, *Herald of Holiness*, January 1992, page 33.

լուրջ կարող են լինել մեր միաբանության համար և ինչքան լուրջ վտանգ կարող է հասցվել Նազովրեցու Եկեղեցուն:

Բոլոր այս պատճառներով, հանձնաժողովը խստորեն առաջարկում է, որպեսզի բոլոր այդ ուղղումները մերժվեն: Համաձայն այդ Հավատքի Դրույթի, Նազովրեցիները հավատում են Սուրբ Գրքի բավարարությանը և նրա անվիճելի հեղինակությանը, քրիստոնեական կյանքի, հավատքի, վարդապետության և էթիկային վերաբերվող հարցերում: Դա այն ամենն է, ինչ մեզ անհրաժեշտ է ասել:

II. ՊԱՏԱՍԽԱՆ JUD-802 ԵՎ JUD-816 ԲԱՆԱՁԵՎԵՐԻՆ, ՈՐՈՆՔ ՎԵՐԱԲԵՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՎԱՏՔԻ ԴՐՈՒՅԹ VI (ՔԱՎՈՒԹՅՈՒՆ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

2001, 2005, և 2009 թվականների յուրաքանչյուր Գլխավոր Ասամբլեա ստանում էր բանաձևեր, որոնք կապված էին Հավատքի Դրույթ VI Քավության տերմինաբանության հետ: 2001-ին պատգամավորներից ստացվել էին 3 բանաձևեր, որոնք ձգտում էին փոխել " պարգևի արժանի " տերմինը "քավչականի" (“...շնորհիվ խաչի վրա Նրա [պարգևի արժանի] <u>քավչական</u> մահի ...”): Բանաձևի համար նշանակված օրենսդիր հանձնաժողովը, ուղղումներ մտցրեց և առաջարկեց հեռացնել այդ հաստատումից երկու տերմիններն էլ ("պարգևի արժանի " և "քավչական"): 2001 թվականի Գլխավոր Ասամբլեան և շրջանային միաբանությունները ընդունեցին այդ բանաձև ուղղումներով: Այսպիսով, ո՛չ " պարգևի արժանի " և ո՛չ "քավչական" բառերը Հավատքի ներկայիս Դրույթի մեջ չի հայտնվում (“...Իր մահվան միջոցով...”): 2005-ին և 2009-ին, յուրաքանչյուր Գլխավոր Ասամբլեա ստանում էր բանաձև այն մասին, որպեսզի վերականգնվեր "արժանի պարգևի" բառերը Հավատքի Դրույթ VI (“...շնորհիվ խաչի վրա Նրա <u>պարգևի արժանի</u> մահի...”): Երկու դեպքերում էլ, հետագա ուսումնասիրությունների համար, բանաձևերը տրվել էին Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդին (ԳՍԽ): Այդ ԳՍԽ-ն իր հերթին հանձնարարել էր Սուրբ Գրքի Ուսումնասիրության Խորհրդին քննարկել այդ երկու բանաձևերը, որոնք փոխանցվել էին 2009 թվականի Գլխավոր Ասամբլեային և կապված են Հավատքի Դրույթ VI հետ, որպեսզի 2013 թվականի Գլխավոր Ասամբլեայի ժամանակ միջոցներ կիրառելու համար մշակվեն համապատասխան հանձնարարականներ միջոցներ:

Բանաձև JUD-802. Առաջարկում է Հավատքի Դրույթ VI Քավություն-ում տեղադրել "պարգևի արժանի" ձևակերպումը (“...շնորհիվ խաչի վրա Նրա <u>պարգևի արժանի</u> մահի...”):

Բանաձև JUD-816: Առաջարկում է Հավատքի Դրույթ VI Քավություն-ում փոխել խոսքերի կարգը, ընդգրկելով տարբեր " հղումներ Աստծո սիրո վերաբերյալ,

որպես քավության համար մոտիվացիոն փաստ (Ավ. Հոհաննու 3:16) և ավելի ընդարձակ հղումներ քավչության այլ ասպեկտների համար ":

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաջարկություն 1: Մերժել JUD-802 բանաձևը, որը առաջարկում է Հավատքի Դրույթ VI. Քավություն-ում տեղադրել "պարգևի արժանի" ձևակերպումը: Տվյալ Հանձնաժողովը առաջարկում է թողնել Հավատքի Դրույթ VI այնպես, ինչպես այն ձևակերպված է այժմ:

Առաջարկություն 2: Մերժել JUD-816 բանաձևը, որը առաջարկում է փոխել Հավատքի Դրույթ VI ձևակերպումը, ընդգրկելով " հղումներ Աստծո սիրո վերաբերյալ, որպես քավության համար մոտիվացիոն փաստ (Ավ. Հոհաննու 3:16) և ավելի ընդարձակ հղումներ քավչության այլ ասպեկտների համար ": Տվյալ Հանձնաժողովը առաջարկում է թողնել Հավատքի Դրույթ VI այնպես, ինչպես ձևակերպված է այժմ:

Առաջարկություն 3: Տվյալ Հանձնաժողովը առաջարկում է, որպեսզի 2013 թվականի Գլխավոր Ասամբլեան դիմի Նազովրեցու Եկեղեցու տարբեր ուսումնական հաստատությունների, որպեսզի նրանք կատարեն ուսումնասիրություններ, նշանակեն և անցկացնեն կոնֆերանսներ և ձևակերպեն տարբեր գրավոր փաստաթղթեր, որոնք ուղղված կլինեն ընդարձակելու քավության մասին կոնցեպցիայի հասկացողությանը և այսպիսով կհարստացնեն Եկեղեցու հասկացողությունը և հավատքը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Քավության մասին գաղափարների լայն շրջանակ: Սուրբ Գիրքը օգտագործում է շատ պատկերներ, որպեսզի մեզ փոխանցի խաչի վրա Քրիստոսի քավչական մահի տարբեր ասպեկտներ: Նրանք իրենց մեջ ընդգրկում են զոհ, փրկագին/քավություն, ողորմություն, բավարարություն, շփոթություն, բարոյական ազդեցություն և այլն: Այս մոդելները քավության հետ կապված արտահայտում են տարբեր հայացքներ Աստծո ցասման և սիրո դերի մասին: Ակնհայտ է, որ նրանցից ոչ մեկը չի կարող ցույց տալ այն ամենի ամբողջական խճանկարը, որը մեղավոր մարդկությանը տրված է քավության միջոցով: Այսպիսով, տրամաբանական է, որ Հավատքի Դրույթ VI խուսափում է տերմինաբանությունից, որը ոչ համաչափորեն առավել ուշադրության է արժանացնում մեկ կերպարի, բացառելով կամ արհամարելով մեկ ուրիշը: Ի շահ պաշտպանելու Աստծո մեծահոգի սիրո բազմակողմանի բնավորությունը, որը ցուցադրված է խաչի վրա և եկեղեցու միաբանությամբ, ելնելով նրա ընդհանուր շնորհքով, տվյալ Հանձնաժողովը թողնում է այս առաջարկությունը:

Ավելին, Հավատքի Դրույթը Քրիստոսի քավչական մահի վերաբերյալ, չի կարող կարդացվել առանց Սուրբ Գրային ճշմարտության, արտահայտված Հավատքի այլ Դրույթներում, ինչպես մարդկության մեղավորության, արդարացման և ամբողջական փրկության մեր կարիքի, Աստծո արդարության և դատաստանի և ամբողջ ստեղծագործության նորոգության մասին: Քրիստոսի մահը ամբողջապես պատասխանում է մեղավոր մարդու և ստեղծագործության կարիքին, հաշտեցնելու մեկս մեկի և Սուրբ Աստծո հետ: (Հռովմ. 5:15-17).

Լակոնիկ լեզուն Հավատքի Դրույթներում: Հավատքի եկեղեցական Դրույթները ձգտում են արտացոլել երկու կարևոր իրեր. 1) յուրաքանչյուր վարդապետության համար փոխանցել հիմնական հավատքի էլեմենտներ և 2) խուսափել այն տերմինաբանությունից, որը կամ փոքրացնում, կամ ավելացնում է այն, ինչ վերաբերվում է առանձին վերցված վարդապետությանը: Հետևաբար Հավատքի Դրույթները կազմվել են մանրակրկիթորեն և դիտավորությամբ օգտագործվել է լակոնիկ լեզուն: Այսպսով, մենք հավատում ենք, որ անհրաժեշտ է հաստատել վարդապետության միայն գլխավոր ճշմարտությունը, որը արտահայտված է ներկայիս հավատքի Դրույթներում:

Անհրաժեշտություն չկա վերականգնելու "պարգևի արժանի" տեքստը: Կան ծանրակշիռ պատճառներ, ինչու՞ անհրաժեշտություն չկա վերականգնելու "պարգևի արժանի" տեքստը. 1) Համաձայն ժամանակակից գլխավոր պատմաբանների (Կոլինզ, Մեդոկս, Վիլյամս) "պարգևի արժանի" բառերը, Ջոն Վեսլիի քավությանը վերաբերվող քարոզի գլխավոր խոսքերից չէին և նրանք նրա ուսմունքում չեն գրավում գլխավոր տեղը, 2) "պարգևի արժանի" բառերի վրա Գ. Օրտոն Վիլիի աստվածաբանության մեջ չկա հատուկ ուշադրություն, չնայած որ բավարավածության, ողորմածության և փոխարինման վերաբերյալ կան բարեկամ կոնցեպցիաներ: 3) "պարգևի արժանի" բառերը Սուրբ Գրային խոսքեր չեն:

Գոյություն ունեցող ձևակերպման բավարարությունը: "Պարգևի արժանի" և "քավչական" բառերը չնայած տեղին են թվում, իրականում պետք չեն, քանի որ իրենց իմաստով ընդգրկված են "քավություն" բառի մեջ: "Քավություն" տերմինը իր մեջ ներառում է իր մեջ բանալի կոնցեպցիան այն մասին, որ Քրիստոսը իրեն զոհաբերել է, որի շնորհիվ մենք հաշտված ենք Աստծո հետ և մեր փրկությունը վաստակել ենք (կամ "ձեռք ենք բերել" — Եբրայեցիս 9:12) մեր հնազանդությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Անհրաժեշտ է առավել մանրամասն համատեղ ուսումնասիրություն: Քավությանը վերբերվող կենտրոնական ուսմունքի համար, Հանձնաժողովը ընդունում է առողջ քննարկման և խոր ուսումնասիրության արժեքավորությունը: Սակայն, այդպիսի երկխոսությունը տեսանկյունների ընտրության ժամանակ, չպետք է տեղավորվի նեղ շրջանակներում, որպեսզի ընդգրկվի մտային երանգների

լայն սպեկտոր: Այդպիսի ուսումնասիրությունը պետք է անցկացվի հանուն մեր եկեղեցու դավանանքի հարստացման համար, որը տեղի կունենա հանուն նրա, որ մենք ավելի լավ հասկանանք մեր փրկության հետ կապված, Աստծո շնորհալի գործողությունները:

Քանի որ, Նազովրեցու Եկեղեցին ընդունում է քավությունը իր ամբողջականությամբ, ապա Հանձնաժողովը աջակցում է ապագա երկխոսությունների և ուսումնասիրությունների գաղափարը, որը աստվածաբանական մտածելակերպով կարող են անցկացնել այս հանձնաժողովի անդամները: Քավության տարբեր կերպարները ուսումնասիրելու համար, որոնք ներկայացված են Աստվածաշնչյան հեղինակների և ներշնչված Սուրբ Հոգու կողմից կպահանջվի հարգալից ու գիտական քննարկումներ, ինչպես նաև քննարկելու տեսություններ, հաճախ սխալ, որոնք ավելի ուշ քրիստոնեական մտածողները կապել են այդ կերպարների հետ: Նաև անհանգստություն արտահայտվեց, որ խաչը և քավությունը ավելի ուշադրության են արժանի քան հաճախ նրանք ստանում են: Մնում է հուսալ, որ նոր ուսումնասիրությունները կապված Քրիստոսի սիրո հետ, Եկեղեցի կբերեն ավելի էներգիա և կծառայեն որպես կատալիզատոր, որպեսզի ամբողջ Եկեղեցին միաբանվի կատարելու Մեծ Հանձնարարականը:

Համաձայն սրան, հանձնաժողովը առաջարկում է, որպեսզի 2013 թվականի Գլխավոր Ասամբլեան դիմի տարբեր Նազովրեցու Եկեղեցու տարբեր ուսումնական հաստատությունների, որպեսզի նրանք կատարեն հետազոտություններ, նշանակեն և անցկացնեն կոնֆերանսներ և ձևակերպեն տարբեր գրավոր փաստաթղթեր, որոնք ուղղված կլինեն ընդարձակելու քավության մասին կոնցեպցիայի հասկացողությանը և այսպիսով կհարստացնեն Եկեղեցու հասկացողությունը և հավատքը:

ՀԱՍՏԱՏՈՒՄ

Մենք ուզում ենք հաստատել, որ ուսմունքը անպայման տանում է դեպի պրակտիկ կյանքի և ճիշտ փառաբանության (orthodoxy), պետք է ուղղորդվի դեպի ճիշտ պրակտիկա կամ գործեր(orthopraxy): Ակադեմիական ուսումնասիրությունները անց են կացվում, որպեսզի օգնեն հավատքի համայնքի հավատքին ու կյանքին: Մենք կանչված ենք ապրելու համաձայն Քրիստոսի Ավետարանի, որպես Աստծո անքննելի սիրո դրսևորում: Այն ժամանակ երբ գիտնականները ուսումնասիրում են այդ մեծ ճշմարտությունը, եկեղեցին պատասխանատու է նրա համար, որպեսզի ապրի այն լույսով, որը մենք ունենք: Վեսլիի հետևորդները միշտ եղել են գործնական սատերիոլոգիայով, որը կախված է սրտի, կյանքի, ավետարանելու հսկայական ցանկությամբ և կատարելու գթասրտության ծառայություն:

Խոսելով Քրիստոսի մահվան և քավության մասին, Սուրբ Գիրքը բացում է շնորհքի կյանքը, որը հաշտեցնում է անկում ապրած մարդկությանը Աստծո հետ, և այդպիսով մեզ դարձնում է նոր արարչագործության մի մասը (Եփես. 2:14-16; Կող. 1:19-22): Բաց չթողնելով ոչ մի դետալ, Սուրբ Գիրքը հաստատում է, որ Քրիստոսը

քանդել է մարդկանց և Աստծո միջև եղած պատը, դարձնելով նրանց մեկ ամբողջականություն, և Եկեղեցուն կոչ է արել ապրել դրան համապատասխան և կատարել հաշտեցման ծառայություն իր ամբողջականությամբ (Եփես. 4:1-6; 2 Կոր. 5:14-15, 17-21):

Այդ պատճառով, մենք դիմում ենք մեր տեղական եկեղեցիներին, որպեսզի նրանք լսեն և կատարեն կրկնակի պարտականություն, հավատան, որ Քրիստոսի մահը հաշտեցրել է մարդկանց, և որպեսզի ապրեն շնորհքով հաշտեցված ժողովրդի կյանքով: Խաղաղությունը մեր Աստծո և Հոր հետ, համայնքում ձևավորում է մեր աղոթքի կյանքը, որը իր հերթին կապ ունի տեսանելի և անտեսանելի կյանքի հետ, ներելու համար ուժ և ցանկություն է տալիս և մոտիվացնում է այն, թե ինչպես ենք կիսում մեր սեփականությունը և մեր կյանքերը: Դա մեզ նաև դարձնում է այս աշխարհում Քրիստոսի բարի լուրը առաքողներ (2 Կոր. 5:20) և խաղաղարներ (Մատթ. 5:9), ովքեր հանդես են գալիս մարգարեական հռչակումներով: Քեյպ Թաունում պարտականությունների ընդունման դեկլարացիան արժանի է մեր անբաժան ուշադրությանը և մեր նրան նվիրվածությանը երբ նա խոսում է.

> Ճշմարտություն փնտրողների համար հիմնական մոտիվացիան հաշտեցումն է Աստծո և մեկս մյուսիս հետ, որը պահանջում է Աստված, և ինչպես ասում է Աստված. առանց դրա խաղաղություն լինել չի կարող: Ճշմարիտ և երկարատև հաշտեցումը պահանջում է անցյալի և ներկայի մեղքի ընդունում, Աստծո առջև ապաշխարություն, խոստովանություն տուժվածների դեմ, ինչպես նաև ներելու և ներվելու ձգտում: Այն իր մեջ նաև ընդգրկում է այն, որ Եկեղեցին պետք է նվիրի իրեն վնասի փոխհատուցման եթե մեկը տուժվել է բռնությունից և ճնշումներից: Մենք ցանկանում ենք, որպեսզի Քրիստոսի միջազգային Եկեղեցին՝ նրանք ովքեր հաշտվել են Աստծո հետ, ապրել համաձայն դրա, հաշտված մեկս մյուսիս հետ, և նվիրել մեզ այդ նպատակին և Հիսուս Քրիստոսի անունով աստվածաշնչյան իմաստով խաղաղարարության համար պայքարին: [18]

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ, 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԲԱՆԱՁԵՎԻ ՀԱՄԱՐ, ԿԱՊՎԱԾ *ՈՒՂԵՑՈՒՅՑՈՒՄ* ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԵՏ

Սուրբ Գրքի Ուսումնասիրության Հանձնաժողովը (ՍԳՈՒՀ), առաջարկում է հետևյալ գործողությունները, որոնք պահանջում են փոփոխություններ կատարել *Նազովրեցու Եկեղեցու Ուղեցույցում* և ներկայացված են գործադիր հանձնավողովի

[18] *The Cape Town Commitment: A Confession of Faith and a Call to Action* (The Lausanne Movement, 2011).

կողմից, որպես 2013թվականին Գլխավոր Ասամբլեայի համար անհատական բանաձև:

ԾԱՆՈՒՑՈՒՄ: ԳՈՐԾԱԴԻՐ ԱԿՏԵՐԻ ՀՂՈՒՄՆԵՐԸ ԸՆԴԳԾՎԱԾ ԵՆ ՀԱՍՏ ՏԱՌԱՏԵՍԱԿՈՎ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԵՎ ՑՈՒՑՈՒՄՆԵՐՈՎ :

ՍԳՈՒՀ №1 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Հավատքի Դրույթներ **(JUD-2—Հատուկ Իրավաբանական Հանձնաժողով)**

ՈՐՈՇԵՑԻՆՔ, որ նոր պարագրաֆը *Ուղեցույցին* կավելացվի հետևյալ տեսքով. Գլխավոր Ասամբլեայի համար Հավատքի Դրույթների հետ (պարագրաֆներ 1-22) բանաձևերը, պետք է հանձնվեն Գլխավոր Սուպերինտենդենտների Խորհրդին, քննարկելու այն աստվածաբանների հետ, ովքեր կներկայացնեին Եկեղեցին և կարտացոլեին նրա միջազգային բնությունը: Այդ հանձնաժողովը պետք է հաշվետու լինի ցանկացած առաջարկություններով և բանաձևերով, հաջորդ Գլխավոր Ասամբլեայի առջև:

ԱՅՆՈՒՀԵՏԵՎ ՈՐՈՇՈՒՄ ԵՆՔ, որ եթե այն ընդունվի, ապա տվյալ բանաձևը պետք է տեղադրվի *Նազովրեցու Եկեղեցու Ուղեցույցի* Սահմանադրության մեջ:

ՊԱՏՃԱՌՆԵՐԸ.

1. Հավատքի Դրույթները պարունակում են Նազովրեցու Եկեղեցու հիմնական վարդապետական դիրքորոշումները:

2. Մեր Հավատքի Դրույթներում փոփոխություն կատարելու համար, անհրաժեշտ է որոկավորված մասնագետների կողմից կատարել կշռադատված և բազմակողմանի ուսումնասիրություններ, ովքեր արտացոլում են մեր հարանվանության միջազգային բնությունը:

3. Այդ ուսումնասիրությունները պետք է կատարվեն, մինչև որ Գլխավոր Ասամբլեայի կողմից կձեռնարկվեն ինչ -որ գործողություններ:

4. Այդպիսի հետազոտություններից, լավ մտածված առաջարկություններից կամ բանաձևերից, հաջորդ Գլխավոր Ասամբլեան առավելություն կստանա, եթե նրանք անհրաժեշտ են ճիշտ որոշումներ ընդունելու համար:

5. Այդ բանաձևի տեղադրումը Սահմանադրության մեջ երաշխավորում է, որ նա ինչպես նաև Հավատքի Դրույթները, չեն դառնա մեկ Գլխավոր Ասամբլեայի քվեարկման առարկա:

Հարգանքներով փոխանցված է ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ կողմից:

Թովմաս Կինգ, նախագահ,

Ալեքսանդր Վարգիզե, քարտուղար